

Ենթածրագրի մանրամասն նկարագրությունը

<<Դեպի Տաթև վանական համալիր տանող ճանապարհի վերակառուցում>> **ենթածրագիրը իրականացվելու է** Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության համավարկավորման ներքո:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից նախատեսվում է իրականացնել <<Սատանայի կամուրջ>>-ից դեպի Տաթևի վանական համալիր տանող գոյություն ունեցող գրունտային ճանապարհի վերակառուցում:

Ծրագիրը անմիջականորեն կապված է «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի կողմից իրագործվող «Տաթևի վերածնունդ» ծրագրի հետ, որը մեկնարկել է դեռևս 2008 թ.-ին: «Տաթևի վերածնունդ» ծրագրի հիմնական նպատակը Տաթևի վանական համալիրի վերականգնումն է՝ վանքի պատմամշակութային և հոգևոր նշանակությանը համապատասխանող անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծման և հարակից համայնքների զարգացման ապահովման միջոցով:

Ճանապարհի վերակառուցումը կնպաստի նաև բնակչության տրանսպորտային կապի ապահովմանը Տաթև խոշորացված համայնքի գյուղերի միջև, ինչպես նաև Մ2 միջպետական մայրուղու հետ:

<<Սատանայի կամուրջի>> հուշարձանի տարածքի բարեկարգումը ենթածրագրում ներառված չէ. սակայն այն կարող է իրականացվել հետագայում: Հետևաբար տվյալ ենթածրագրի իրականացումը կնպաստի «Սատանայի կամուրջի» հուշարձանի, որպես տուրիստական գոտու, ակտիվ շահագործմանը:

Ենթածրագրի իրականացումը անմիջական ազդեցություն ունի հարակից գյուղերի բնակիչների և վերոհիշյալ ճանապարհով երթևեկող այլ անձանց վրա. գրեթե կրկնակի կրճատվելու է ճանապարհը անցնելու տևողությունը (նախկինում անցնում էին 30 րոպեում, ճանապարհը վերակառուցելուց հետո՝ մոտ 15 րոպեում), ինչը կնպաստի ժամանակի խնայողությանը և հավելյալ դրամական եկամուտ կստեղծի անցորդների համար:

Ուսումնասիրվել է Որոտան գետի կիրճում գտնվող Սատանի կամրջից մինչև Տաթևի Վանական համալիր տանող ճանապարհը : Գնահատվել է ճանապարհը գրունտային, գործող,

հարթ, ոլորապտույտ ճանապարհ է, 6 - 9 մետր լայնությամբ և 6000 մետր երկարությամբ: Ճանապարհի մի կողմում՝ եզրային մասում

տեղադրված են բետոնե սահմանափակիչ կանգնակներ 20-30 մետր քայլով, ոլորանների եզրերում ճանապարհային նշաններ: Ճանապարհի որոշ հատվածներում առկա են քարաթափումներ: Ճամփեզրով փորված է ջրահեռացման առու:

Ծրագրով նախատեսվում է որոշ հատվածներում ճանապարհի լայնացում, հենապատերի կառուցում, ասֆալտբետոնե ճանապարհի և ջրահեռացման առուի կառուցում, մետաղական արգելապատնեշների կառուցում:

Այլ կազմակերպությունների կողմից կամ համայնքի բյուջեի միջոցներով առաջիկայում տարածքում իրականացվելիք ծրագրեր, որոնք կարող են առընչվել այս Ենթածրագրով լուծվող խնդիրներին.

«Տաթևի վանքի վերածնունդ» ծրագրի շրջանակներում 2017-2018 թթ.-ին նախատեսված է ավարտին հասցնել շինարարա-վերականգնողական աշխատանքները Տաթևի վանական համալիրի համապատասխան կառույցներում (սբ. Աստվածածին եկեղեցի, «Գավազան» ճոճվող սյուն, օժանդակ շինությունների հյուսիս-արևմտյան հատված (թանգարանային մաս), վաղ միջնադարյան «Կոթող», վանական համալիրի հյուսիսային մուտքին հարող տարածքի բարեկարգում) և այլն: «Մեծ Տաթև» նախագծի շրջանակներում 2017-2018 թթ.-ին նախատեսվում է իրականացնել այնպիսի ծրագրեր ինչպիսիք են՝ ֆինանսական միջոցների ներգրավում և դրանց ներդրում «Տաթև» ազգային պարկի ենթակառուցվածքներում, ՀՀ Սյունիքի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև զբոսաշրջային երթուղիների մշակում և գործարկում Իրանից դեպի Հայաստանի հարավ և Արցախ զբոսաշրջային հոսքերի ավելացման նպատակով, հյուրատների զարգացման նախագծի աշխատանքների շարունակում. B&B հյուրատների և հանրային սննդի կետերի տրամադրած ծառայությունների որակի չափորոշիչների ներդրում և այլն:

Ֆինանսական և կառուցվածքային կարգավորումները

Ենթակառուցվածքի սեփականատերն է՝ ՀՀ կառավարությունը ի դեմս ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն:

Վերակառուցվող ճանապարհի պահպանման և շահագործման ծախսերը իրականացվելու են պետական բյուջեի հատկացումների հաշվին: Վերակառուցվող Մ2 - Տաթև - Աղվանի - Կապան - Մ2 հանրապետական նշանակության ճանապարհի պահպանման և շահագործման պատասխանատուն հանդիսանում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, իսկ սպասարկումն իրականացվելու է Գորիսի «Ոսմար» ՍՊ ընկերության կողմից՝ համաձայն վերոհիշյալ նախարարության և ընկերության միջև կնքված հնգամյա պայմանագրի:

Գնահատվում է 75 ժամանակավոր աշխատատեղ (շինարարության մեջ ընդգրկված աշխատակիցներ):

